ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

—

Տպագրութեան տալով Խորէն Նարբէի այս մի քանի նամակը, մենք սորանով նպատակ ունինք ներկայացնելու մեր ընթերցողներին հետաքրքրական վաւերաթղթեր, որոնք մի կողմից հաստատում են մեր «Խորէն արքեպիսկոպոս Գալֆայեանը» ընդարձակ ուսումնասիրութեան մէջ արտայայտած կարծիքները նորա մասին, միւս կողմից էլ հաղորդում են նորանոր լրացուցիչ ու շահեկան տեղեկութիւններ հանգուցեալին վերաբերեալ։

Այդ նամակներից մեր ընթերցողները կարող են հաւաստիանալ հանգուցեալի գրաբառ գրելու ճապաղ և արուեստական ոճի ու ձևի մասին և նորա դէպի աշխարհիս մեծամեծները ու զօրեղներն ունեցած շողոքորթութեան հանող վերաբերմունքի և սալօնական-քաղաքավարական յարաբերութեան մասին այդպիսիների հետ։

Մեզ համար նորութիւնը դոցա մէջ այն տեղեկութիւններն են, որոնք, նախ, հաղորդում են հանգուցեալի Թէոդոսիայից Պոլիս գնալու և վերադառնալու մասին, երկրորդ, նորա լուսանկարչութեան արուեստը սիրելու և իմանալու մասին։

Դուրս է գալիս, որ Խորէնի իւր հայրենի քաղաքին այցելութիւն գնալը 60 թուին եղել է ոչ միայն հասարակ այցելութիւն, այլ մի որոշ նպատակով կատարուած ուղևորութիւն։ Նա դիտաւորութիւն է ունեցել դորանով ցրելու Պոլսեցւոց մէջ Խալիբեան դպրոցի մասին շատ տարածուած աննպաստ կարծիքները, հուչակելու

Խալիբի անունը ամիրաների շրջանում և գիշերօթիկ սաներ բերելու դպրոցի համար, որ և, ինչպէս երևում է, նա մասամբ և ժամանակաւորապէս յաջողել է գլուխ բերել։ Բացի սորանից, այդ ժամանակները Պոլսում եղել են մեծամեծ խռովութիւններ մեծամեծների մէջ, եղել են կուսակցական կռիւներ, և մայրաքաղաքի ամբողջ ստուար հայութիւնը տակն ու վերայ է լինում եղել ծագած ազգային խռովութիւններից, որ իւր Խորէնի մասնաւոր և հրապարակական քարոզներով իբրև թէ սակաւ ինչ մեղմացել ու հանգստացել են։

Դուրս է գալիս նոյնպէս, որ Պոլսեցիք այնքան սիրել ու հաւանել են Խորէնին, որ ցանկացել են, որ նա առ միշտ մնայ այնտեղ և ծառայի ազգային դաստիարակութեան գործին, բայց Խորէնը չի կամեցել թողնել Թէոդոսիան, մինչև որ Այվազեանը և Խալիբեան դպրոցը այլ ևս չեն կարօտիլ իւր օգնութեան ու ծառայութեան։

Իսկ ինչ վերաբերում է Խորէնի լուսանկարչութեան արուեստը սիրելու և իմանալու խնդրին,—պէտք է նկատել, որ նոյն 60 թուին Խալիբի Թէոդոսիայում եղած ժամանակ նա խնդրած է լինում «աղային» գնել լուսանկարչութեան պարագաներ և միջոց տալ իրան իւր սիրած գործով պարապելու։

Խալիբը կատարել է նորա խնդիրը և ոչ միայն պարագաներն է ընծայել նորան, այլ և յատկապէս դորա համար մի պատշգամբ է շինել տուել, որի բարձրութիւնից նա սիրել է արևի լուսով լուսանկարել իւր սիրած տեսարանները։

Ե. ՇԱՀԱԶԻԶ

Մեծապատիւ իշխան

Թէպէտև չիցէ մեր ընկալեալ տակաւին զցանկալի աւետիս ժամանելոյդ Ձեր ողջամբ ի քաղաք անդր բնակութեանդ, այլ զի սրտեռանդն մաղթանօք խնդրեցաք զայդ յԱստուծոյ ընդ բովանդակ իսկ ժամանակս ուղևորութեանն Ձերոյ, վասն որոյ

և անշուշտ ուրեմն եմք յողորմութիւնս բարձրելոյն, զի ինքն իսկ Տէր ամենակալ զՀրեշտակ խաղաղութեան իւրոյ ընդ առաջ Ձեր առաքեալ՝ առաջնորդեալ հասոյց ողջ և անարատ յոր դէմն եղեալ էիք, և մաղթեմք ի սրտէ՝ զի զնոյն Հրեշտակ Թողցէ Ձեզ օգնական և ձեռընտու յամենայն գործս Ձեր բարիս և աղգաշահս, որով ահա Թողուք աշխարհի և ազգի և եկեղեցւոյ՝ Անուն յիշատակաց անմահութեան։

Եւ ահա համառօտագիծ մերովս Թղթով՝ շնորհաւորել ընդառաջեալ Մեծապատիւ Տեառնդ, փութամ միանգամայն ի ձեռն գրոյ հաստուցանել զանհատուցանելի մերս շնորհակալութիւն ընդ այնքան անարգամեծար սէր և երախտիս՝ զոր վայելեցաք լիովին յաւուրս այսոսիկ։ Եւ եթէ իցէ ինչ յոր ցաւ է մեզ՝ այն իսկ է զի փաւուրքս այսոքիկ երանելիք, ուրախալիք և քաղցունք՝ փութագոյնս յոյժ և արագ արագ անցին։ Բայց սակայն ի գեղեցիկ խոստմունս Ձեր վստահացեալ՝ ակն ունիմք եթէ լիցի մեզ յետ քանի մի ամսոց դարձեալ տեսութեամբդ Ձերով զուարճանալ և վերթարեալ զօրանալ ի գործ և յաշխատութիւն։

Ընկալարուք աղէ, Մեծապատիւ Տէր, զմեր երախտագէտ զգացմունս, և գիտացէք զմեզ յամենայն ժամ

Աղօթարար ծառայ
Խորէն վարդապետ

Ցաւելում և ես երկտողիւս ծանուցանել զի մեք ամենեքեան ի քաջողջութեան կամք Աստուծով, և յուսամք զի և Մեծապատիւ Տէրութիւնդ եհաս ողջամբ և անվնաս ի տեղի իւր։

Ողջ լինել մաղթեմք Ձեզ

Աղօթարար
Գաբրիէլ վ. Այվազեանց

Մեծապատիւ Տէր և յոյժ սիրեցեալ իշխան

Պատրաստեալ Թողուլ զԹէոդոսիա և ուղղոյ լինել ի Կոստանդնուպոլիս, ի քաղաք անդր իմոցս Հայրենեաց, Թէպէտ ժամ մի հազիւ մնայցէ ինձ ազատութեան, բայց և զայն ժամ ցանկալի է ինձ յոյժ նուիրել յիշատակի Մեծապատիւ Տեառնդ, առ ի հաւատարիմ առնել քաջի իշխանիդ՝ եթէ քանի քաղցր է մեզ և անմոռաց ամենեին և Անուն ձեր և պատկեր և յիշատակ։

Մեծ է ինձ զի և Մեծապատիւ Տէրդ անարգամեծար իմն սիրով արժանի յիշման զմերս առնիցէ նուաստութիւն, որպէս և զմեր բազմակրաֆական ձանձրալի խնդրուածս... ընդ որ

դեռ ևս ամաչեմք շիկնելով։ Բայց մեզ իցէ արդեօք մեղ զի օժ-
տեցաք թէ արդեօք որում այնչափ սէր եցոյց մեզ և խոնարհա-
միտ ընտանութիւն, որով և անչափ զմեզ համարձակեցուցեալ՝
բայց և մեծաւ ինն և անլուծանելի կապեաց զմեզ սիրով և ե-
բախտագէտ մտերմութեամբ...

Ի ժամու զի սրացեալ միտք իմ և առ Ձեօք անդր յածե-
լով զսակաւամասնեայ տողեմ զբանքս՝ ահա յունկն իմ հնչեն մե-
ծաշաւաչ դղրդմունք ուրագաց և կոփիւնք դափիւնք տապարաց
և սիրտ իմ զուարթացեալ և զմայլի՝ իբրև ի լուր ձայ-
նի քաջարուեստ նուագացն քաղցրութեան, և յափշտակին միտք
իմ ի գեղեցիկ աւուրս յորս ելեալ ի բարձրաւանդակ անդր նո-
րակառոյց պատշգամին, զկրաՁին յարդիւնս ածեալ, և զցան-
կալի Պատկեր դիմաց Մեծապատիւ իշխանիդ առից արևադրոշմ
և լուսապաճոյճ երանգօք։ Բայց այժմէն՝ չև հասեալ տենչալոյ
այնր աւուր, փութամ զիմ սրտալիր մատուցանել Ձեզ գոհու-
թիւնս ընդ մեծի այսր շնորհիս՝ որով հաճեցայք կառուցանել
ինձ օթևան այսքան շքեղ և փառաւոր, յորում լիցի ինձ վաս-
տակել անմոռաց յուշի կապելով զլիշատակ Մեծապատիւ Տէ-
րութեանդ։

Մնամ Քրիստոսասէր իշխանիդ և յոյժ սիրեցելոյ Տեառնդ

Աղօթարար ի սրտէ

Խորէն վարդապետ

Ի Թէոդոսիա 15 յուլիս 1860

Մեծապատիւ և քաջափայլ և յոյժ սիրեցեալ իշխան

Երկիցս՝ զկնի ցանկալոյ այցելութեան Ձերում աստ՝ հա-
մարձակեցայ գրել առ Ձերդ Մեծութիւն, զմին՝ ոչ յետ բազում
աւուրց անցանելոց ի վերայ տխրառիթ չուոյդ առ ի մէնջ, իսկ
զմիւսն՝ յաւուր անդ մեկնելոյ իմ ի Պոլիս՝ գրեցի առ Ձեզ,
գիտուն առնել զՏէրդ՝ զի ահա գնամ՝ բայց իմ սիրտ ընդ ու-
սումնարանիդ է և ընդ Նորուն Ազնուական բարերարի գնամ,
բայց և ի բացակայութեան անդ իմում ջան ի վար արկից օգ-
տակար լինել Ուսումնարանին, և Ձերոյդ նպաստել փառաց,
տարածելով իմովսանն զհռչակ հայրաւոյ գեղեցիկ Անուան սի-
րելոյ իշխանիդ։ Եւ ահա դարձ այսրէն արարեալ՝ փութամ
այսօր ծանուցանել Քաջիդ՝ զի և ի կրկնակի խոստմունս իմ
անդ ջանացայ գտանել հաւատարիմ։ Ամենայն ուրեք պատմեցի
զուսումնարանէն, մեծամեծ գովեստիւք, և հերքեցի զամենայն
որ ի թշնամեաց անտի սերմանեալ թիւր և վատթար կարծիս՝
որ բազում յոյժ էին։ Եւ ահա բերի այսր ընդ իս վեցեակ թո-

շակաւոր աշակերտաս։ Եւ թէ չէր իմ հարկեալ ի պաշտամանէս փութալ իդարձ՝ գոյր և բազու�ս այլ ձգել յաշակերտութիւն։

Ոչինչ ընդհատ ջանիւք և զքաջափայլ Անուանէ իշխանիդ մերոյ վաստակեցայ, պատմելով առ մեծն և առ փոքր առհասարակ, ի տունս և յեկեղեցիս զազգասէր և զբազմաւովելի ձերդ ձեռնարկութիւն, հրաւիրելով զեղբարս մեր զՀայաստանեացս ի սէր Ձեր և նմանողութիւն։ Առ այս թելադիր ինձ լինէր զարմանալին ձեր բարեբարութիւն և գեղեցիկ գեղեցիկ Ձեր բարեմասնութիւնք, և երկրորդ անգամ՝ սէր իմ մեծ և լիասիրտ, որով ձգեալ աներևոյթ իմն զօրութեամբ՝ ի Ձեզ, փութամ ճեպեմ զամենեսեան սիրողս Ձեր առնել և զարմացողս։

Պարտք իմն են այս յինէն կողմանէ. քանզի և ես ոչ սակաւ վայելեցի ի սէր Ձեր և բարեբարութիւն։ Շինուածն լուսանկարչութեան (ֆոտոգրաֆի) վկայ հանդիսացեալ կայ իմիջի ցուցանել՝ թէ. յորժամ սիրիցէք դուք զոք՝ ոչ խնայէք ի ծախս։

Այս արդիւնք են Ձերդ բարեկամութեան, քաջանուն Տէր, որում շնորհակալու մտօք եմ ես և եղէց միշտ

Անձնանուէր

Խորէն վարդապետ

Ի Թէոդոսիա, 28 Սեպտեմբեր 1860

Ց. Դ. Մրարեմ ընդ թղթոյս և երկուս այլ զոր գրեցին առ Ձեզ երկոքին յականաւոր արանց որ ի Պոլիս, և խղաչեցին զիս մատուցանել առ Մեծութիւն Ձեր։